ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում 2015թ.-ի ընթաքում իրականացված ծրագրերի մասին

Երեխաների առուղջության համար կանխարգելիչ միջոցառումներ առաջարկելու նպատակով Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից հետազոտվել են հանքարդյունաբերական տարածքներին մոտ գտնվող համայնքներում գործող դպրոցների /Ալավերդի քաղաքի թվթվ 4, Ախթալա քաղաքի թվով 2 և Արմանիսի/ բակերի հողածածկույթը՝ ծանր մետաղներով աղտոտվածության չափաքանակները որոշելու համար:

<<Լոռե էկո ակումբ>> ՀԿ-ի կողմից Ագարակի և Լոռի Բերդի դպրոցներում <<Նոր շունչ թափոններին>> ծրագրով, իսկ Գյուլագարակի, Գարգառի և Պուշկինոյի դպրոցներում <<Փրկենք եղևնուն>> ծրագրով կազմակերպվել են դասընթացներ:

2015թվականի մայիսի 9-ին, ապրիլի 24-ին նախորդող օրերին և հուշարձանների պահպանության օրվա շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանը, ներգրավելով համայնքների աշխատակազմներին, ուսումնական հաստատությունների սաներին, ՀՀ Լոռու մարզում տեղակայված զորամասերի զինծառայողներին, համագործակցելով ՊՄՊ Լոռու մարզային ծառայության հետ, կազմակերպել է հուշարձանների տարածքների մաքրման և բարեկարգման աշխատանքները:

Ապրիլի 18-ի՝ հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության օրվան ընդառաջ, ինչպես նաև ՀՀ պաշտպանության, կրթության և գիտության, մշակույթի նախարարների 20.01.2012թ. համատեղ հրամանի կատարումն ապահովելու նպատակով, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության օժանդակությամբ, 2015թ. ապրիլ-մայիս և սեպտեմբեր ամիսներին մարզի մի շարք համայնքներում դպրոցականների, զինվորականների և ՊՄՊ Լոռու մարզային ծառայության աշխատակիցների մասնակցությամբ իրականացվել են Երկրորդ աշխարհամարտի, Արցախյան ազատամարտի, 1988թ. երկրաշարժի զոհերի և այլ հուշարձանների շրջակայքի սանիտարական մաքրման և բարեկարգման, ինչպես նաև կանաչապատման և ծառատնկման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ մաքրման և բարեկարգման աշխատանքներ իրականացվել են Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան, Դարպաս, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Գոգարան, Սարահարթ, Ձորագյուղ, Գարգառ, Գյուլագարակ, Լեջան, Կուրթան, Յաղդան, Դեբեդ, Բազում և Դսեղ համայնքներում, որոնց մասնակցել են մոտ 200 զինվորականներ և 300 դպրոցականներ, մաքրվել և բարեկարգվել են 30-ից ավելի հուշարձաններ: